

կրկին անգամ հաստատուեցան իրենց պաշտօնին մէջ համաձայն խնդրանաց Հասարակութեանն :

*Փետրուարի 18.* — Վեհափառ Կաթողիկոսի եւ Աստուածընտիր Հայրապետին Տեառն ՄԱՏԹԷՈՍԻ Հրամայական կոնդակին համաձայն, որ ի 15 Յուլիոսի ընդ համարաւս 31, Առաջնորդական Ատենիս Անդամ Գրիգոր Աբեղայն Աղափիրեանց արձակեցաւ իւր պաշտօնէն, եւ յուղարկեցաւ իսուրբ Էջմիածին :

*Փետրուարի 22.* — Կերչ քաղաքի Աղօթատան երէցփոխան մեծարոյ վաճառական Գաբրիէլ Աղայն Փէշէքէրեան՝ իւր փութաջան աշխատասիրութեանն ու ջերմեռանդ ծառայութեանը համար արժանացաւ ընդունել Առաջնորդական Ատենիս գրաւոր շնորհակալութիւնը :

*Մարտի 14.* — Համաձայն առաջարկութեան Խարասուպազարի սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Գաւթի Աւագ քահանայի նախկերտեան, եւ

միակամ հաւանութեան հասարակութեան քաղաքին՝ նշանակեցաւ երէցփոխան նոյն եկեղեցւոյ մեծարոյ Խաչուկն Քէչիեան :

*Մարտի 17.* — Ըստ զօրութեան Հրովարտակի Սրբագումար Սիւնիոյոսին Ս. Էջմիածնի եւ ըստ համաձայն առաջարկութեան Տեառն Փրօքուրորի նորին Մեծարոյ Յովհաննու Եսայեան Միրաքեանց, հրամանագրեցաւ բոլոր Հոգեւորական կառավարութեանց եւ քահանայից վիճակիս, որ այսուհետեւ թէ՛ իսուրբ Էջմիածին եւ թէ՛ յԱռաջնորդական Ատենիս խրկուելիք փողերը մեծարոյ երէցփոխանք կամ Հոգեւորական Կառավարութիւնք մասնաւոր անձանց ձեռքով չհասցընեն, այլ յատուկ ապահովական եղանակաւ. եւ եթէ մասնաւոր անձանց ձեռքով ղրկելու լինին՝ եւ կորսուի ձանապարհին կամ աւազակներու ձեռքը մատնուի, այն ժամանակը ղրկողները կպարտաւորին վճարել այն կորուստը առանց այլեւայլութեան :

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք,

Խ Ի Ղ Ճ Մ Տ Ա Յ

Համայն ուրեք յոյզքն այն եւ խայթք զոր իխորս անդ խղճին զգամք՝ մեծարանս իմն են սրբութեան առաքինութեանն զոր առաթուր հարկանեմք :

Համայն ուրեք զմեղանացն զհետ երթան ձանձիր եւ արտմութիւն, որ եւ ազգ իմն առնեն մեղ եթէ իկարգի եւ յանմեղութեան եւեթ իցէ գառնել զմերս բարեբաստութիւն իվերայ երկրի :

Իզո՛ւր է մեղ առնուլ զանձամբ զկերպարանս աներկիւղ խրոխտանաց. մեղապարտ իխղճն մտաց՝ անձամբ անձին է մատնտու :

Տագնապք անագորոյնք՝ ամենայն ուրեք

յառաջոյ մեղ ընթանան. միայնութիւն՝ խըռովէ զմեղ, աղջամուղջն ահաբեկէ : Այնպէս իմն թուի մեղ եթէ յամենայն ուստեք ցընորք անկերպարանք իզուրս ոստուցեալք յերես հարկանիցեն մեղ զսրտին մեր զարհաւիրս : Երազք ահաւորք՝ կերպարանս սեաւս եւ խաւարինս բերեն մեղ առաջի : Եւ ոճիրն, զորոյ այնքան փափաքանօք զյեան ընթանամք, ոճիրն այն ինքնին ապա զմեր պնդի զյետ, գիշակեր իմն անգեղ բերելով զսիպ, եւ յարձակեալ պատառէ կեղեքէ զսիրտ մեր, եւ զվրէժս սլահանջէ զհեշտութեանն զոր եւ ինքնին էր մեղ մատուցեալ :

ՄԱՍԻՅԱՆՈՒ.

